Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի

գիտական խորհրդի 26.12.2025 թ. թիվ 5 նիստի արձանագրություն

Օրակարգ

1. Ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփում։

2. Առկա ուսուցմամբ կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների քննարկում /1-ին և 2-րդ կուրսեր/։

3. 2025-2026 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ քննարկում։

4. 2025-2026 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում։

5. Ընթացիկ հարցեր։

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 5 նիստին 36 անդամներից ներկա էին 26-ը։ ԵԼՀ ֆակուլտետի դեկանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփմանը։ Նշվեց, որ գործընթացքը ընդհանուր առմամբ բնականոն ձևով է ընթացել։ Դեկանը հորդորեց ամբիոնների վարիչերին առավել ուշադրություն դարձնել գործընթացին՝ ավելի համակողմանի պատկեր ունենալու համար։ Անդրադարձ կատարվեց օրակարգի երկրորդ և երրորդ հարցերին՝ առկա ուսուցմամբ կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի /1-ին և 2-րդ կուրսեր/, ինչպես նաև ավարտական աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ աշխատանքների քննարկմանը։

Հաստատվեց նաև օրակարգի չորրորդ հարցը՝ 2025-2026 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը։

Ընթացիկ հարցեր

ՄԻԱՁԱՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇՎԵՑ՝

- հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի «Անգլերեն և գրականություն» երկամյա մագիստրոսի կրթական ծրագրի տևողության փոփոխությունը և դիմել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին՝ ստանալու թույլտվություն հաջորդ ուսումնական տարվանից նշյալ ծրագիրը 3 կիսամյակ տևողությամբ իրագործելու (90 կրեդիտ աշխատածավալով) համար։

- ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնին կից գործող Գրանադայի համալսարանի Իսպաներեն լեզվի և մշակույթի կենտրոնի տնօրենի պաշտոնում վերահաստատել ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Հասմիկ Գրիգորի Բաղդասարյանին:
- երաշխավորել անգլերենի թիվ 1 ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Ռուզան Գրիգորի Կուլիկյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:

Գ. Բարսեղյանը անդրադարձավ նաև իր պաշտոնավարման հետ կապված հարցին: Նշվեց, որ հունվարի 1-ից նա վայր կդնի ԵԼՀ ֆակուլտետի դեկանի լիազորությունները: Գ. Բարսեղյանը նշեց, որ վայր է դնում իր լիազորությունները առժամանակ, բայց չի հեռանում ֆակուլտետից: Նա նշեց, որ կմնա անգլիական բանասիրության ամբիոնում որպես դասախոս կես դրույքով: Դեկանը հավելեց, որ տվյալ փուլում մի փոքր դադար է վերցնում՝ տարբեր հանգամանքներով պայմանավորված, բայց շարունակելու է մնալ ֆակուլտետի կողքին: Նշվեց նաև, որ որոշումը կայացրել է միայն ֆակուլտետի նկատմամբ ունեցած մեծ սիրո և կապվածության հանգամանքից ելնելով: Դեկանը վայր է դնում իր լիազորությունները հանգիստ խղճով և մեծ սիրով իր պարտականությունները փոխանցում փոխդեկան Մարինե Յաղուբյանին, ով իր աշխատանքով ապացուցել է, որ կարող է արդյունավետ աշխատել և ցանկացած իրավիճակում ճիշտ ու կշռադատված որոշումներ կայացնել: Նա հավելեց նաև, որ փոխդեկան Մարինե Յաղուբյանը բարեկիրթ, պարկեշտ, ԵԼՀ ֆակուլտետի ուսանողների և դասախոսների կողմից սիրված ու գնահատված անձնավորություն է, ով ֆակուլտետի գործունեության կայացման գործում կարևոր դերակատարություն ունի:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

26.12.2025 թ.